ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1562-Ա « 25 » ապրիլի 2025 թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ
ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ
ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի կողմից 27.03.2025 թվականին հայտարարված ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/111 ծածկագրով Երևանի քաղաքապետարանի կարիքների համար համակարգիչների, մոնիտորների և տպիչների ձեռքբերման ընթացակարգին հայտեր ներկայացրած և համակարգի կողմից 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած «Սոպրանո Գրուպ» ՍՊԸ-ն և 5-րդ, 6-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած «Նոութբուք Սթոր» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակիցներ) խախտել են գնման ընթացակարգի շրջանակում ստանձնած պարտավորությունները:

Մասնակցների կողմից ներկայացված հայտերում առկա են եղել անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ: Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 41-րդ կետի պահանջները, 09.04.2025 թվականին մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել Մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում Մասնակիցների կողմից արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել: Գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածի 42-րդ կետով, Մասնակիցների հայտերը գնահատել է անբավարար և մերժել:

Գնման ընթացակարգի շրջանակում չկայացած ընթացակարգի մասին հայտարարությունը՝ 3-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով 15.04.2025 թվականին հրապարակվել է տեղեկագրում:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով.

1. «Սոպրանո Գրուպ» ՍՊԸ-ին և «Նոութբուք Սթոր» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի վրա:

3.Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ